# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՀԱՂՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Է. փոստ haghpat.lori@mta.gov.am
հեռ.-0-253-6-01-02

ՀԳ – 164
<<23>> դեկտեմբերի 2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Ա. Նալբանդյանին

Հարգարժան մարզպետ

Ձեզ եմ ներկայացնում Հաղպատ համայնքի ավագանու 19.12.2016թ-ի թիվ 39-44 որոշումները:

Առդիր՝ 44 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Վ. Քառյան

Կ.Տ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հաղպատ համայնք, հասցե գ. Հաղպատ
հեռախոս (253) 6-01-02 էլ. փոստ haghpat.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«19» դեկտեմբեր 2016թ. ԹԻՎ 39-Ա

### ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով՝

Հաղպատ համայնքի ավագանին որոշեց՝

Հաստատել Հաղպատ համայնքի ավագանու 2016թ-ի դեկտեմբերի 19-ի նիստի օրակարգը.

1. ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՐԱԶԴԱՆ ԿՈՐՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԹԱՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

| N | Համայնքի ավագանու անդամներ | Կողմ (5) | Դեմ (0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|---|---|
| 1 | Ալիխանյան Աշոտ Ս. | | | |
| 2 | Բաբայան Արման Հ. | | | |
| 3 | Բեժանյան Ավետիք Ս. | | | |
| 4 | Մեջլումյան Արթուր Ս. | | | |
| 5 | Վարոսյան Վալերի Կ. | | | |

Համայնքի ղեկավար Վ. Քառյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հաղպատ համայնք, հասցե գ. Հաղպատ
հեռախոս (253) 6-01-02 Էլ. փոստ haghpat.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«19» դեկտեմբեր 2016թ. ԹԻՎ 40- Ա

### ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 54.1-ին հոդվածով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝ Հաղպատ համայնքի ավագանին որոշում է.

1. Ստեղծել Հաղպատ համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Մաթոսյան Սուրեն - համայնքի ղեկավարի տեղակալ, խորհրդի նախագահ,
2. Մեհրաբյան Լուիզա - աշխատակազմի քարտուղար, խորհրդի քարտուղար
3. Ալիխանյան Աշոտ - ավագանու անդամ, խորհրդի անդամ
4. Վարոսյան Վալերի - ավագանու անդամ, խորհրդի անդամ
5. Վարոսյան Վահրամ- համայնքի բնակիչ, խորհրդի անդամ
6. Երզնկյան Արտեմ - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ
7. Քոչարյան Աշխարհբեկ - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ
8. Շամբարյան Ռոզա - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ
9. Քոչարյան Ալեքսան - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ
10. Վարոսյան Ռուբեն Վահագի - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ

2. Խորհրդին՝ գործունեությունը իրականացնել համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 15-ի <<Հաղպատ համայնքի ղեկավարին կից, Հաղպատ համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին>> N 36-Ն որոշմամբ սահմանված կարգով:

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2014թ. նոյեմբերի 28-ի << Հաղպատ համայնքի ղեկավարին կից խորհուրդ ստեղծելու մասին >> N 33-Ա որոշումը:

| N | Համայնքի ավագանու անդամներ | Կողմ (5) | Դեմ (0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|---|---|
| 1 | Ալիխանյան Աշոտ Մ. | [signature] | | |
| 2 | Բաբայան Արման Հ. | [signature] | | |
| 3 | Բեժանյան Ավետիք Ա. | [signature] | | |
| 4 | Մեջլումյան Արթուր Մ. | [signature] | | |
| 5 | Վարոսյան Վալերի Կ. | [signature] | | |

Համայնքի ղեկավար [signature] Վ. Քառյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հաղպատ համայնք, հասցե գ. Հաղպատ
հեռախոս (253) 6-01-02 էլ. փոստ haghpat.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«19» դեկտեմբեր 2016թ. ԹԻՎ 41-Ա

### ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 54.1-րդ հոդվածով և << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով

Հաղպատ համայնքի ավագանին որոշեց՝

1, Ստեղծել Հաղպատ համայնքի ղեկավարին կից համայնքի գլխավոր հատակագծի,քաղաքաշինական, բնապահպանական ,կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների խորհուրդ հետևյալ կազմով

1.Քառյան Վահրամ - համայնքի ղեկավար, խորհրդի նախագահ,
2. Մաթոսյան Սուրեն -համայնքի ղեկավարի տեղակալ, խորհրդի նախագահի տեղակալ
3.Մեհրաբյան Լուիզա - աշխատակազմի քարտուղար, խորհրդի քարտուղար
4.Բեժանյան Ավետիք - ավագանու անդամ, խորհրդի անդամ
5. Մեջլումյան Արթուր - ավագանու անդամ, խորհրդի անդամ
6. Երզնկյան Լազիկ - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ
7.Շամբարյան Ռոզա - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ

2.Խորհրդին՝ գործունեությունը իրականացնել համայնքի ավագանու 2013թ-ի նոյեմբերի 15-ի << Հաղպատ համայնքի ղեկավարին կից ,Հաղպատ համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեությւն կարգը հաստատելու մասին>> թիվ 36-Ն որոշմամբ սահմանված կարգով:

3.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2013թ-ի նոյեմբերի 15-ի <<Հաղպատ համայնքի ղեկավարին կից խորհուրդ ստեղծելու մասին >> թիվ 38-Ա որոշումը:

| N | Համայնքի ավագանու անդամներ | Կողմ (5) | Դեմ (0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|---|---|
| 1 | Ալիխանյան Աշոտ Ս. | [signature] | | |
| 2 | Բաբայան Արման Հ. | [signature] | | |
| 3 | Բեժանյան Ավետիք Ա. | [signature] | | |
| 4 | Մեջլումյան Արթուր Ս. | [signature] | | |
| 5 | Վարոսյան Վալերի Կ. | [signature] | | |

Համայնքի ղեկավար [signature] Վ. Քառյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հաղպատ համայնք, հասցե գ. Հաղպատ
հեռախոս (253) 6-01-02 էլ. փոստ haghpat.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«19» դեկտեմբեր 2016թ. ԹԻՎ 42-Ա

### ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 54.1-րդ հոդվածով և << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով

Հաղպատ համայնքի ավագանին որոշեց՝

1, Ստեղծել Հաղպատ համայնքի ղեկավարին կից համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների խորհուրդ՝ հետևյալ կազմով.

1.Քառյան Վահրամ - համայնքի ղեկավար, խորհրդի նախագահ,
2. Մաթոսյան Սուրեն -համայնքի ղեկավարի տեղակալ, խորհրդի նախագահի տեղակալ
3.Մեհրաբյան Լուիզա - աշխատակազմի քարտուղար, խորհրդի քարտուղար
4.Բաբայան Արման - ավագանու անդամ, խորհրդի անդամ
5. Ալիխանյան Աշոտ - ավագանու անդամ, խորհրդի անդամ
6. Մեջլումյան Հարութ - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ
7.Վարոսյան Վահրամ - համայնքի բնակիչ, խորհրդի անդամ

2.Խորհրդին՝ գործունեությունը իրականացնել համայնքի ավագանու 2013թ-ի նոյեմբերի 15-ի << Հաղպատ համայնքի ղեկավարին կից ,Հաղպատ համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեությոն կարգը հաստատելու մասին>> թիվ 36-Ն որոշմամբ սահմանված կարգով:

3.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2013թ-ի նոյեմբերի 15-ի <<Հաղպատ համայնքի ղեկավարին կից խորհուրդ ստեղծելու մասին >> թիվ 39-Ա որոշումը:

| N | Համայնքի ավագանու անդամներ | Կողմ (5) | Դեմ (0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|---|---|
| 1 | Ալիխանյան Աշոտ Ս. | [signature] | | |
| 2 | Բաբայան Արման Հ. | [signature] | | |
| 3 | Բեժանյան Ավետիք Ա. | [signature] | | |
| 4 | Մեջլումյան Արթուր Ս. | [signature] | | |
| 5 | Վարոսյան Վալերի Կ. | [signature] | | |

Համայնքի ղեկավար [signature] Վ. Քառյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հաղպատ համայնք, հասցե գ. Հաղպատ
հեռախոս (253) 6-01-02 էլ. փոստ haghpat.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«19» դեկտեմբեր 2016թ. ԹԻՎ 43-Ա

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՐԱԶԱՏ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԹԱՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 28-ի <<Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Հաղպատ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին>> թիվ 35-Ա որոշման 16-րդ կետով՝

Հաղպատ համայնքի ավագանին որոշեց՝

Նիկալ Կամսարի Վարոսյանի մահվան 20 000 դրամ գումարը հատկացնել նրա կնոջը՝ Մարգո Արզումանի Վարոսյանին:

| N | Համայնքի ավագանու անդամներ | Կողմ (5) | Դեմ (0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|---|---|
| 1 | Ալիխանյան Աշոտ Մ. | | | |
| 2 | Բաբայան Արման Հ. | | | |
| 3 | Բեժանյան Ավետիք Ա. | | | |
| 4 | Մեջլումյան Արթուր Մ. | | | |
| 5 | Վարոսյան Վալերի Կ. | | | |

Համայնքի ղեկավար Վ. Քառյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հաղպատ համայնք, հասցե գ. Հաղպատ
հեռախոս (253) 6-01-02 էլ. փոստ haghpat.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«19» դեկտեմբերի 2016թ. ԹԻՎ 44-Ն

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

Հաղպատ համայնքի ավագանին որոշեց՝

1. Հաստատել Հաղպատ համայնքի 2017-2021 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| N | Համայնքի ավագանու անդամներ | Կողմ (5) | Դեմ (0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|---|---|
| 1 | Ալիխանյան Աշոտ Ս. | [signature] | | |
| 2 | Բաբայան Արման Հ. | [signature] | | |
| 3 | Բեժանյան Ավետիք Ա. | [signature] | | |
| 4 | Մեջլումյան Արթուր Ս. | [signature] | | |
| 5 | Վարոսյան Վալերի Կ. | [signature] | | |

Համայնքի ղեկավար [signature, seal] Վ. Քառյան

ՀԱՂՊԱՏԻ ... 06606783

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

## ՀԱՂՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ

**2017-2021** ԹԹ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

# Հ Ն Գ Ա Մ Յ Ա Ծ Ր Ա Գ Ի Ր



Համայնքի ղեկավար Վ. Քառյան

Հաստատվել է համայնքի ավագանու
2016 թվականի
դեկտեմբերի 19 -ի թիվ 44-Ն որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն
1. Համայնքի իրավիճակի նկարագրություն
1.1 Համայնքի նկարագիրը, աշխարհագրական դիրքը, կլիման
1.2 Ժողովրդագրություն
1.3 Տեղական ինքնակառավարում
1.4 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը
1.5 Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն
1.6 Բնակելի և ոչ բնակելի տարածքների սպասարկում
1.7 Հողօգտագործում
1.8 Գյուղատնտեսություն
1.9 Բնության և շրջակա միջավայրի պահպանություն
1.10 Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն
1.11 Առևտուր և ծառայություններ
1.12 Կրթություն
1.13 Մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ
1.14 Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ
1.15 Հանգստի գոտիներ, զբոսայգիներ, խաղահրապարակներ, բակային տարածքներ
1.16 Զբաղվածության և գործազրկության ծառայություն
1.17 Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը
1.18 Աղետների ռիսկի կառավարում
1.19 Համայնքի գործարար միջավայր
1.20 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների վտանգների վերլուծություն
1.21 Համայնքի զարգացման հիմնական հնարավորություններ
1.22 Համայնքին սպառնացող հիմնական վտանգներ
2. Համայնքի տեսլականի ռազմավարության և ՀԶՀԾ-ի հիմնական նպատակների սահմանում
3. Համայնքի տարածում նախատեսվող հանրապետական և մարզային միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումների ներկայացում
4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում
5. Համայնքի ոլորտային ցանկի կազմում և առաջնահերթությունների սահմանում
6. Համայնքի սեփականություն համարվող գույքի կառավարման (օտարման, վարձակալության տրամադրման) հնգամյա ծրագիր
7. Համայնքի հնգամյա ծրագրի զարգացման մոնիթորինգ
8. Եզրափակում

Հաղպատ գյուղը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևելյան տարածքում՝ Լոռվա մարզում:

Գյուղի անունը եղել է Հաղբատ, հետագայում ընդհանրական է դարձել Հաղպատ ձևը: Հաղբատ անունը կազմված է Հաղբ և ատ արմատներից: Հաղբ նշանակում է որոգայթ, թակարդ, իսկ ատ՝ ատել բառի բառարմատն է: Ստացվում է՝ ատում եմ որոգայթը, ծուղակը, թակարդը: Այս անունը վանքին տվել են Բյուզանդիայի Ռոմանոս կայսրից հալածված կրոնավորները:

Հաղպատը որպես բնակավայր թվագրվում է մոտավորապես մթա 8-7-րդ դարերից:

Միջնադարում Հաղպատը անվանվել է նաև մայրաքաղաք, բայց ոչ թե մարդաշատ կամ քաղաքական տեսակետից, այլ որպես հոգևոր մեծ կենտրոն: Վանքն ունեցել է 500 հոգևորական: 1820-28 թթ Եփրեմ կաթողիկոսի օրոք Մայր Աթոռը Էջմիածնից տեղափոխվել է Հաղպատ:

Հաղպատն աշխարհին հայտնի է իր պատմաճարտարապետական կառույցներով՝ Հաղպատավանքով, որը եզակի կառույց է և գրանցված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցուցակի մեջ: Հաղպատավանքը հիմնադրվել է 976 թ. Բագրատունյաց Աշոտ ողորմածի կնոջ՝ Խոսրովանուշ թագուհու միջոցներով:

Հաղպատը ծովի մակերևույթից բարձր է 950-1050 մետր: Կլիման միապաղաղ է, ամռանը շոգ չէ, իսկ ձմռանը՝ առանց սառնամանիքի, օդն ու ջուրն էլ շատ առողջարար են:

Արևմտյան կողմից գյուղը երիզված է անդնդախոր ձորերով, իսկ արևելյան կողմից շրջափակված է Սուրբլիս և Տերունական սարերով, որոնք բերդ են հանդիսացել ապաստակողների համար:

Հաղպատը բազմաթիվ անգամ է ենթարկվել արհավիրքների, բազմաթիվ անգամ ամայացել է, դատարկվել, բայց նորից է բնակեցվել, վերականգնվել:

Ներկայիս հաղպատցիների նախնիները Արցախի Խաչեն գավառից են:

Հաղպատ գյուղը գտնվում է Լոռու մարզկենտրոնից 60 կմ հեռավորության վրա: Գյուղի տարածքով է անցնում պետական մայրուղին, որի հետ համայնքը կապված է 5 կմ երկարությամբ ճանապարհով:

Վերջին տարիներին գյուղում մեծ առաջընթաց է նկատվում. լուսավորվել են գյուղի փողոցները, կատարվել է գյուղի ամբողջական գազաֆիկացում, կատարվում է կանոնավոր աղբահանություն, ասֆալտապատվել են գյուղի ներքին փողոցները:

Գյուղում գործում է վերանորոգված համայնքային կենտրոն, որտեղ գտնվում են մշակույթի տունը, համայնքապետարանը, փոստային բաժանմունքը և բուժկետը:

Վերջին տարիներին գյուղում լայն թափ է ստացել հյուրանոցային գործունեությունը:

Յուրաքանչյուր տարի Հաղպատ են այցելում հազարավոր զբոսաշրջիկներ, որոնց մեծ մասը օթևան են գտնում գյուղի հյուրատներում և հյուրանոցներում:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հաղպատ համայնքի 2017 - 2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (ՀԶՀԾ) մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-ի) իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՔԾ-ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

ՀԶՀԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- համայնքում առկա ենթակառույցները
- համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

Սույն ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությամբ: ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքում աղետի վտանգները (ռիսկերը), որոնց կառավարման համար նախատեսվել են որոշ գործողություններ ու միջոցառումներ:

Համայնքի 2017 - 2021 թթ. ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ ունենալով հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով աստիճանաբար բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀԶՀԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող խորհրդակցական մարմինը՝ ՀԶՀԾ-ի կառավարման հանձնաժողովը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված Հայաստանի Հանրապետության ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

## 1.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 1.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԿԼԻՄԱՆ

### 1.2 Ժողովրդագրություն,

| Հ/հ | Ցուցանիշները |
|---|---|
| Առկա բնակչության թիվը, այդ թվում՝ | 926 |
| Տղամարդիկ | 447 |
| Կանայք | 479 |
| 0-6 տարեկան , այդ թվում՝ | 76 |
| 7-15 տարեկան | 93 |
| 16-62 տարեկան | 614 |
| 63-ից բարձր տարեկան | 143 |
| Կենսաթոշակառուներ, այդ թվում՝ | 156 |
| Տարիքային և աշխատանքային | 143 |
| Հաշմանդամներ, այդ թվում՝ | 13 |
| Մանկուց հաշմանդամներ | 1 |
| Առկա տնային տնտեսությունների թիվը | 222 |
| Նպաստառու ընտանիքների թիվը | 17 |
| Արտագնա/սեզոնային/ աշխատանքի մեկնողների թիվը | 32 |

### 1.3 Տեղական ինքնակառավարում

2016թ-ի հոկտեմբերի 2-ին Հաղպատ համայնքում կայացած ընտրությունների արդյունքում ընտրվել են համայնքի ավագանին՝ բաղկացած 5 անդամից, և համայնքի ղեկավարը, ովքեր կազմավորել են համայնքապետարանի աշխատակազմը:

Համայնքի ավագանու 2016թ-ի նոյեմբերի 21-ի թիվ 26-Ա որոշմամբ հաստատվել է Հաղպատ համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ |
|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 |
| Աշխատակազմի քարտուղար | 1 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 |
| Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ | 1 |
| Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ | 1 |
| Տեխ. սպասարկման անձնակազմ | |
| Գործավար | 1 |
| Հավաքարար | 1 |
| Ջրերի հսկիչ | 1 |
| Տնտեսվար | 1 |

Համայնքի ղեկավարն իր լիազորությունները իրականացնում է աշխատակազմի միջոցով, որն ունի հետևյալ կառուցվածքը՝




## 1.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

Հաղպատ համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 31.03.97թ. թիվ 51 որոշմամբ

Համայնքի սեփականություն համարվող գույքի ֆիզիկական վիճակը բնութագրվում է որպես բավարար

Հաղպատ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը

1.Համայնքապետարանի շենք
2.Համայնքային կենտրոն
3.Խմելու ջրի ներտնտեսային համակարգ
4.Ներտնտեսային ոռոգման ջրի համակարգ
5.Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ
6. Հուշարձան
7. Գերեզմանատուն
8. Աղբյուր
9.Մանկապարտեզ
10. Անասնագոմ

## 1.5 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հաղպատ համայնքը չունի գլխավոր հատակագիծ, ջրահեռացման կենտրոնացված համակարգ (կոյուղի): Համայնքում կանոնավոր կերպով իրականացվում է աղբահանություն: Աղբամանների և աղբահավաք մեքենայի բացակայությունը բացասաբար է անդրադառնում համայնքի արտաքին տեսքի և սանիտարահիգիենիկ պայմանների վրա:
Համայնքի մոտավորապես 80 %-ն է ապահովված փողոցային լուսավորությամբ:
Համայնքը ամբողջապես գազաֆիկացված է, բնակչությունը, մանկապարտեզը և դպրոցն օգտվում են բնական գազից: Համայնքի բնակչությունը խմելու ջուր ստանում է 7 թաղամասերում տեղադրված աղբյուր-ծորակներից, որը չի բավականեցնում այսօրվա պահանջներին: Խմելու ջրով ապահովված են միայն բնակչության 30%-ը: Դպրոցը և մանկապարտեզը ապահովված են խմելու ջրով: Բնակավայրում կա 1 գերեզմանոց, որը ցանկապատված է մետաղյա ցանցով:

## 1.6 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում առկա է 222 առանձնատուն՝ 17000 քմ մակերեսով, որոնց 50 %-ը երկհարկանի է:
Համայնքի վարչական տարածքում, Ախթալայի ենթակայանի մոտ, գտնվում է 1 բազմաբնակարան շենք՝ 224 քմ մակերեսով, որտեղ բնակվում են ենթակայանում աշխատող 4 ընտանիքներ:

## 1.7 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

| Հ/հ | Ցուցանիշները | Ընդամենը համայնքում /հա/ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1. | Համայնքի վարչական տարածքը (հա),այդ թվում՝ | 5745,6 |
| | Համայնքային | 381,26 |
| | Պետական | 5136,91 |
| | Իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն | 28,33 |
| 2. | Գյուղատնտեսական նշանակության հողեր,այդ թվում՝ | 667,77 |
| | Համայնքային | 352,24 |
| | Պետական | 185,75 |
| | Իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն | 5,8 |
| 3. | Բնակավայրի հողեր,այդ թվում | 95,43 |
| | Համայնքային | 10,91 |
| | Պետական | 1,56 |
| | Իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն | 82,95 |
| 4. | Արդյունաբերական,արտադրական հողեր,այդ թվում՝ | 23,80 |
| | Համայնքային | 12,67 |
| | Պետական | |
| | Իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն | 11,12 |
| 5. | Ընդերքօգտագործման հողեր,այդ թվում՝ | - |
| | Համայնքային | - |
| | Պետական | - |
| | Իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն | - |
| 6. | Էներգետիկայի, տրանսպորտի հողեր,այդ թվում՝ | 126,65 |

| | | |
|---|---|---|
| | Համայնքային | 0,1 |
| | Պետական | 124,31 |
| | Իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն | 2,24 |
| 7. | Առողջապահական,հանգստավայրերի,մարզական ու պատմամշակութային նշանակության հողեր,այդ թվում՝ | 29,15 |
| | Համայնքային | 5,12 |
| | Պետական | 22,70 |
| | Իրավաբանական անձանց սեփականություն | 1,33 |
| 8 | Անտառային հողեր | 4780,12 |
| 9 | Ջրային հողեր | 22,68 |

## 1.8 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գոյություն ունի ոռոգման համակարգ, որով ոռոգվում են միայն տնամերձ հողամասերը: Գյուղատնտեսական նշանակության հողերը չեն ոռոգվում, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի կարողանում ստանալ: Համայնքում ավելի զարգացած է անասնապահության ճյուղը:

Սակայն, դրա հետագա զարգացման համար համայնքում խոտհարքների տարածքները չեն բավականացնում, այդ պատճառով համայնքի վարելահողերն աստիճանաբար վերածվել են խոտհարքների:

2016թ-ի հունվարի 1-ի դրությամբ համայնքում առկա են հետևյալ անասնագլխաքանակները՝

| Ցուցանիշի անվանումը | Ընդամենը համայնքում |
|---|---|
| Խոշոր եղջերավոր անասուններ, ընդամենը | 491 |
| Որից՝ կովեր | 153 |
| Արտադրող ցուլեր | 57 |
| Երինջներ 1-ից մինչև 2 տարեկան | 51 |
| Չսերմնավորված էգ մոզիներ՝ 2 տարեկանից բարձր | 1 |
| Երինջներ՝ 2 տարեկանից բարձր | 19 |
| Այլ սեռահասակային խմբերի ԽԵԱ | 210 |
| Խոզեր, ընդամենը | 277 |
| Որից՝ մայր խոզեր | 35 |
| Ոչխարներ բոլոր ցեղերի, ընդամենը | 21 |
| Որից՝ մաքիներ | 13 |
| Այծեր, ընդամենը | 90 |
| Որից՝ մայր այծեր | 81 |
| Ձիեր, ընդամենը | 18 |
| Որից՝ զամբիկներ 3 տարեկան և ավելի | 15 |
| Ճագարներ, ընդամենը | 24 |
| Որից՝ մայր ճագարներ | 18 |
| Թռչուններ, ընդամենը | 1135 |
| Որից՝ ածան հավեր | 1000 |
| Մեղվաընտանիքներ /հատ/ | 348 |
| Ավանակներ | 4 |

Համայնքում անասնապահությամբ, թռչնապահությամբ և մեղվապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, ձու, մեղր: Գյուղմթերքներն իրացվում են գյուղում գործող հյուրանոցներում և հյուրատներում, ինչպես նաև եկեղեցամերձ տարածքում գտնվող վաճառակետերում:

## 1.9 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքի անտառային ֆոնդի պահպանությունն իրականացվում է Թումանյանի անտառտնտեսության կողմից: Ձմեռնամուտին անտառտնտեսության կողմից անտառում կատարվում են սանիտարական հատումներ՝ համայնքի յուրաքանչյուր տնային տնտեսությանը տրամադրվում է մինչև 8 խմ վառելափայտ:

## 1.10 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի վարչական տարածքով է անցնում Հայաստանը Վրաստանին կապող մայրուղին: Հաղպատը մայրուղուն կապում է հանրապետական նշանակության 5 կմ երկարությամբ ճանապարհը, որը կառուցվել է շուրջ 50 տարի առաջ և վերանորոգման չի ենթարկվել: Այն գտնվում է անբարեկարգ վիճակում:

Վերջին տարիներին համայնքապետարանի միջոցներով վերանորոգվել են համայնքի 5 ներհամայնքային փողոցներ: Համայնքում տեղադրված են 5 կանգառներ, սակայն բացակայում են երթևեկության նշանները:

Հաղպատ-Ալավերդի երթուղով գործում է հասարակական տրանսպորտ: Գյուղում առկա են մասնավոր շուրջ 130 մարդատար և 12 բեռնատար ավտոմեքենաներ:

## 1.11 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում գործում են 2 առևտրի կետեր, որոնք հիմնականում զբաղվում են սննդի որոշ տեսակների, ծխախոտի, ալկոհոլային խմիչքների և այլ ապրանքների վաճառքով: Համայնքի տարածքում է գտնվում <<Արռոիկ>>, <<Սառնաղբյուր>> և <<Դեբեղ>> ռեստորանները, ինչպես նաև <<Գայանե>>, <<Քեֆիլյան>> և <<Հաղպատ>> հյուրանոցները: Նշվածները համայնքի բյուջե են վճարում տեղական տուրք՝ գործունեության թույլտվության համար: Համայնքում գործում են նաև մի քանի հյուրատներ: Համայնքի բնակիչներից շուրջ 18 մարդ աշխատում է նշված բնազավառներում:
Հաղպատ համայնքում գործում է նաև ավտոմեքենաների գազալիցքվորման 1 կետ:

## 1.12 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում է միջնակարգ հանրակրթական դպրոց, որտեղ սովորում է 81 աշակերտ, որոնք բոլորը տեղացիներ են: Դպրոցը նախատեսված է 120 աշակերտի համար: 2014թ-ին ՀՀ սոց. ներդրումների ֆինանսավորմամբ և համայնքի ներդրումով կապիտալ վերանորոգվել է դպրոցի երկհարկանի շենքը: Շենքում գործում է ջեռուցման լոկալ համակարգ: Դպրոցում աշխատում են 29 աշխատող, որոնցից 22-ը մանկավարժներ են: Մանկավարժներից 8-ը այլ համայնքի բնակիչներ են:

Համայնքում գործում է նախադպրոցական ուսումնական 1 հաստատություն՝ մանկապարտեզ, ուր հաճախում են 26 երեխա և աշխատում է 6 աշխատող, որոնք բոլորը համայնքի բնակիչներ են: Համայնքի մանկապարտեզի գործող մասնաշենքը 2009 թ-ին ենթարկվել է կապիտալ վերանորոգման, այն ներկայում բավարար վիճակում է, ապահովված ջրամատակարարմամբ, գույքով, երեխաներին անհրաժեշտ պարագաներով, խաղալիքներով: Մանկապարտեզը գործում է 8-ժամյա աշխատակարգով, երեխաներին տրվում է տաք սնունդ: Շենքում գործում է ջեռուցման լոկալ համակարգ:

## 1.13 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2014թ-ին ՀՀ կառավարության հրատապ ծրագրով հիմնանորոգված համայնքային կենտրոնում է գտնվում մշակույթի տունը, որտեղ գործում են պարի և նկարչության խմբակներ: Այստեղ է գտնվում հարուստ գրադարանը, որն ունի 8968 կտոր գրքային ֆոնդ: Մշակույթի տանը և գրադարանում հաճախակի կազմակերպվում են համերգներ, մեծարման երեկոներ և տոնական միջոցառումներ:

## 1.14 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքապետարանի շենքում է գտնվում համայնքը սպասարկող բուժկետը, որտեղ աշխատում է 1 բուժքույր: Բուժկետն ապահոված է առաջին բուժօգնության պարագաներով և դեղորայքով: Այն վերանորոգված է, առկա է թեքահարթակ:
Գյուղի բնակչությանը անհրաժեշտության դեպքում սպասարկում են <<Ալավերդու առողջության կենտրոն>> ՊՓԲԸ-ի բժիշկները:
Դպրոցում գործում է վերանորոգված մարզադահլիճ, բակում առկա է մարզադաշտ և խաղահրապարակ:
Համայնքապետրանին կից տարածքում գտնվում է մանկական խաղահրապարակ:
Նշված ոլորտներում իր աջակցությունն է ցուցաբերում <<Վորլդ Վիժն-Հայաստան>> կազմակերպության Ալավերդու ՏԶԾ-ն:

## 1.15 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի հարակից տարածքներում կան հանգստի գոտիներ և գեղեցիկ հուշաղբյուրներ, որտեղ համայնքի բնակիչները և շատ զբոսաշրջիկներ անց են կացնում իրենց հանգիստը:
Տարեցտարի ավելանում են հանգստի համար նախատեսված տաղավարները:
Եկեղեցու տարածքում, հուշարձաններում և հրապարակում համայնքապետարանի ուժերով տեղադրվել են 15 նստարաններ:

## 1.ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կան 550 աշխատունակ մարդիկ, որոնցից մշտական աշխատանքով (այդ թվում՝ գյուղատնտեսական) զբաղված են միայն 367-ը: Չնայած հողի սեփականաշնորհումից

օգտված անձինք չեն համարվում գործազուրկներ, սակայն համայնքում նրանց կողմից կա աշխատատեղի պահանջ, որը կազմում է աշխատունակ բնակչության 25 %-ը:

Համայնքի 17 ընտանիք ստանում է սոցիալապես անապահովության նպաստ:

Համայնքում բնակվում են նաև 13 հաշմանդամներ:

Համայնքի բնակչության հիմնական մասը ապահովված է աշխատանքով, 10 մարդ աշխատում է համայնքապետարանում, 6 մարդ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ում, 21 մարդ դպրոցում, 18 մարդ հյուրատներում և հյուրանոցներում, 58 մարդ աշխատում է <<ԷՅ-ՍԻ-ՓԻ>> և <<Թեղուտ>> ՓԲԸ հանքարդյունաբերության ոլորտներում, իսկ 48 մարդ՝ Ալավերդի քաղաքում գործող տարբեր հիմնարկ ձեռնարկություններում : Յուրաքանչյուր տարի շուրջ 30 մարդ մեկնում է արտագնա աշխատանքի:

Համայնքից զբաղվածության կենտրոնում գրանցված մարդ չկա:

## 1.17 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքում վերջին տարիների ընթացքում նկատելի է որոշակի դրական տեղաշարժ ՏԻՄ-ի բնակչության փոխհարաբերություններում: Ներկայումս նոր ձևավորված ՏԻՄ-ի գործունեությունը դարձել է համեմատաբար ավելի թափանցիկ և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Համայնքի բնակիչները սկսել են բավականին ակտիվորեն մասնակցել ՏԻՄ– ի կողմից կազմակերպված հանրային հանդիպումներին ու միջոցառումներին: Մշակույթի տանը կազմակերպվում են հանրային լսումներ և քննարկումներ (մասնավորապես, համայնքի բյուջեի նախագծի, համայնքային ծրագրերի և այլնի շուրջ), տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվում են ուսուցման և վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ, որոնց հաճույքով մասնակցում են ինչպես համայնքի ՏԻՄ-երը և աշխատակազմի մասնագետները, այնպես էլ համայնքի որոշ ակտիվ բնակիչներ:

Համայնքի ղեկավարի և ավագանու կողմից ընդունված իրավական ակտերը տեղադրվում են համայնքի http://www.haghpat.am/ինտերնետային կայքում, որը նպաստում է ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ բնակչության վստահության ամրապնդմանը:

Համայնքի ավագանու կողմից ընդունվել են տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերը, որոնք մեծապես կնպաստեն բնակիչների ավելի ակտիվ մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը:

## 1.18 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը գտնվում է բավարար վիճակում:Համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծվել է աղետների դեպքում բնակչության տարահանման հանձնաժողով: Յուրաքանչյուր տարի համայնքում ուսումնավարժական միջոցառումներ են անցկացվում: Համայնքում կազմված է <<Հաղպատ համայնքի քաղաքացիական պաշտպանության>> և <<Երկրաշարժի հետևանքով համայնքի գործողությունների>> պլաններ, որոնք հաստատվել են ՀՀ Լոռու մարզպետի և ՀՀ ԱԻՆ ՓԾ-ի պետի կողմից:

Վերջին տարիների Հաղպատը մայրուղուն կապող ավտոճանապարհին կատարվել են քարաթափման աշխատանքներ:

## 1.19 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրը սահմանափակվում է համայնքում գործող 3 հյուրանոցների, 3 ռեստորանների, 4 քարի մշակման արտադրամասերի, առևտրի 2 կետերի գործունեությամբ, որոնց հետ ՏԻՄ-երը պաշտպանում են լավ ու բարյացկամ հարաբերություններ: Համայնքի բնակիչներից նշված կազմակերպություններում աշխատում են շուրջ 30 բնակիչներ:

Հիմնվելով համայնքում տիրող փաստացի իրավիճակի ուսումնասիրության, վերլուծության և գնահատման արդյունքների վրա՝ կարելի է արձանագրել համայնքում ներկայումս առկա ընդհանուր և ոլորտային հիմնական հիմնախնդիրները: Դրանք են՝

- համայնքը չունի գլխավոր հատակագիծ և քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթեր,
- համայնքում խմելու ջրի ջրամատակարարման ցանցը կիսակառույց է, ջրամատակարարման ոչ բավարար մակարդակ,
- Մայրուղուց համայնք 5 կմ ավտոճանապարհը գտնվում է անբարեկարգ վիճակում
- համայնքը չունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ (կոյուղի),
- Համայնքի մի քանի փողոցներ ասֆալտապատված չեն, չունեն գիշերային լուսավորության համակարգ
- Համայնքի մանկապարտեզի երկրորդ մասնաշենքը ունի հիմնանորոգման կարիք
- Համայնքն ունի գյուղտեխնիկայի ձեռքբերման կարիք,
- Համայնքի տուրիզմի զարգացման գրասենյակի ստեղծում
- Համայնքում կա եկեղեցամերձ տարածքի բարեկարգման և առևտրի տաղավարների կառուցման պահանջ
- Համայնքը չունի գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ, որի պատճառով վարելահողերը մեծամասամբ չեն մշակվում, դրանք աստիճանաբար վեր են ածվել խոտհարքների,
- Համայնքի եկեղեցու համալիրի մեջ մտնող Միլ հուշաղբյուրը գտնվում է կիսավեր վիճակում

Համայնքի հիմնախնդիրների ցանկը կարելի է շարունակել, սակայն, ակնհայտ է, որ հնգամյա ժամանակահատվածում անհնար է լուծում տալ համայնքում առկա բոլոր հիմնախնդիրներին: Վերևում թվարկված հիմնախնդիրներից անհրաժեշտ է առանձնացնել նրանք, որոնց լուծումն, իրատեսականության տեսանկյունից, նպատակահարմար է ներառել համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից և համայնքի հետագա զարգացման՝ ՏԻՄ-երի ընտրած ռազմավարությունից և սահմանած հիմնական նպատակներից:

## 1.20. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎՏԱՆԳՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքի կենտրոնում գտնվող Հաղպատի վանական համալիր պատմամշակութային հուշարձանները
- Հյուրանոցների և հյուրատների առկայություն

- Համայնքում ժամանակակից մեթոդներով վերանորոգված հանրակրթական դպրոցի և մանկապարտեզի առկայություն
- Համայնքային կենտրոնի առկայություն, որտեղ գտնվում է համայնքապետարանը, մշակույթի տունը, փոստային ծառայությունը և բուժկետը,
- Համայնքում հեռախոսակապի և հեռուստատեսության առկայությունը
- Համայնքում արտադրված գյուղմթերքների (միս, ձու պանիր, կաթ,), և տնամերձ հողամասերում աճեցված մրգի և բանջարեղենի իրացումը հյուրանոցներում,- հյուրատներում և զբոսաշրջիկների կողմից
- Համայնքը ամբողջությամբ գազաֆիկացված է
- Համայնքի աշխարհագրական լավ դիրքը (մոտիկությունը տարածաշրջանային կենտրոն Ալավերդուն, համայնքի տարածքով անցնող հանրապետական նշանակության Վանաձոր-Բագրատաշեն ճանապարհը)
- Զբոսաշրջիկների ակտիվ այցելություններ Հաղպատ համայնք
- Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման, գեղատեսիլ բնություն, հարակից անտառային գոտու առկայություն

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքի առանձնատներում ջրամատակարարման ոչ բավարար մակարդակ
- Նարհամայնքային մի քանի փողոցների անբարեկարգ վիճակ,
- Մայրուղուց համայնք ավտոճանապարհի ոչ բարեկարգ վիճակ
- Համայնքում ջրահեռացման կենտրոնացված համակարգերի (կոյուղու) բացակայություն
- Աղբատար ավտոմեքենայի բացակայություն, աղբարկղերի պակաս
- Գյուղատնտեսական նշանակության հողամասերում ոռոգման համակարգերի բացակայություն,
- Գյուղտեխնիկայի բացակայություն
- Համայնքում վարելահողերի լիարժեք մշակում

## 1.21ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Համախմբել գույքային ու ֆինանսական ռեսուրսները և ապահովել օրենքով ՏԻՄ-երին վերապահված սեփական լիազորությունների ամբողջական ու լիարժեք իրականացումը
- Էականորեն բարձրացնել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ի հաշիվ տեղեկատվական արդի համակարգերի ներդրման և արդյունավետ շահագործման
- Համայնքի տարածքում նպաստել տնտեսության տարբեր ճյուղերի (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) զարգացմանը՝ օգտվելով համայնքում բնական պաշարների, պատմամշակութային և այլ արժեքների առկայությունից
- Նպաստել համայնքի տարածքային համաչափ զարգացմանը՝ տեղային «աճի բևեռների» ստեղծման և զարգացման, համայնքի սոցիալ-տնտեսական մրցունակության և գրավչության բարձրացման շնորհիվ

- համայնքի ՏԻՄ-երի, աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունների աստիճանական հզորացում, տեղական ժողովրդավարության ամրապնդում, համայնքում պատշաճ կառավարման սկզբունքների հետևողական իրականացում,
- ՏԻ-ին բնակիչների ներգրավվածության բարելավում՝ բնակիչների մասնակցության ձևերի ներդրման և զարգացման միջոցով,
- ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակների հետևողական բարձրացում,
- համայնքի ֆինանսական կառավարման համակարգում հստակ մեխանիզմների ներդրում և հետևողական կիրառում,
- նոր աշխատատեղերի ստեղծում և համայնքից միգրացիայի նվազեցում, բնակչության թվաքանակի կայունացում:

Համայնքի զարգացման 2017-2021թթ. հնգամյա ծրագրի հիմնական նպատակներն են՝

- ՏԻ-ը բնակիչների մասնակցության ակտիվացում՝ մասնակցության նոր մեթոդների և ձևերի ներդրման և աստիճանական զարգացման միջոցով,
- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության, թռչնապահության, մեղվապահության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորում,
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ առանձնատների խմելու և տեխնիկական ջրի ջրամատակարարման արտաքին և ներբնակավայրային համակարգերի նորոգման և շահագործման, աղբահանության և սանիտարական ծառայությունների կազմակերպման և մատուցման ճանապարհով,

## 3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

2017-2021 թթ. ընթացքում համայնքի ՏԻՄ-երը նախատեսում են լայնորեն համագործակցել պետական կառավարման մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Լոռու մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2017-2021թթ.-ին նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- Խմելու ջրագծի կառուցում՝ Ստեփանավան-Նոյեմբերյան ջրագծից
- Համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով:

- Համայնքի վարչական տարածքում զարկ տալ հյուրատների և հյուրանոցների ստեղծմանը՝ նպաստելով զբոսաշրջության զարգացմանը
- Հարևան համայնքների (Ալավերդի, Օձուն, Ախթալա և Քոբայր) հետ համատեղ զարգացնել ստեղծված տուրիզմի զարգացման ծրագիրը,

## 1.22 ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Մայրուղուց համայնք ճանապարհներին քարաթափումների և սողանքների վտանգը
- Ներհամայնքային փողոցներում և ճանապարհներում ջրահեռացման հեղեղատարների բացակայության պատճառով դրանց վիճակի էլ ավելի վատթարացման վտանգը
- Համայնքում հողագործությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը վտանգում է գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումը
- Համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը:

# 2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Հաղպատ համայնքը դարձնել զբոսաշրջության համար գրավիչ, գյուղատնտեսական մթերքների արտադրության, հատապտուղների վերամշակման, մաքուր, բարեկարգ, առևտրի և սպասարկման, կրթական և մշակութային զարգացած ենթակառուցվածքներ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող տարածք:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

- Ապահովել համայնքի համաչափ զարգացումը
- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնագլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- համայնքում կաթի, մսի, հատապտուղների հանձնման և վերամշակման արտադրամասերի ստեղծում և գործարկում,
- Արվեստի դպրոցի և ժամանցային կենտրոնի ստեղծում
- համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և կենցաղսպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով,

- Համայնքի փողոցների նորոգում և բարեկարգում, ջրահեռացման և արտաքին լուսավորության համակարգերի անցկացում, ճանապարհային նշանների տեղադրում,
- համայնքի բնակչության սոցիալ–տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների տեսակների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական կրթություն, արտադպրոցական դաստիարակություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման, հասանելիության ու մատչելիության ապահովման և որակի անշեղ բարձրացման միջոցով,

- համայնքի մանկապարտեզի 2-րդ մասնաշենքի հիմնանորոգում
- Եկեղեցու վերանորոգում՝ նպաստելով համայնքում զբոսաշրջության զարգացմանը:
- Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների հասանելիության և մատուցման մակարդակի բարձրացում՝ պետական պատվերի շրջանակներում:
- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

2017-2021թթ. ընթացքում Հայաստանում ընթացող վարչատարածքային բարեփոխումների և (կամ) միջհամայնքային համագործակցության շրջանակներում նախատեսվում են հետևյալ նպատակային ծրագրերը և միջոցառումները՝

- ՀՏԶՀ-ի հետ՝ «Համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգման և սպասարկման, աղբահանության ծառայությունների ստեղծում, ներհամայնքային հասարակական տրանսպորտի համակարգի ձևավորում, դպրոցականների ու երիտասարդության շրջանում բնապահպանական և ագրոբիզնեսի կառավարման գիտելիքների տարածում» ծրագիրը:
- Հնարավոր այլ ծրագրեր ու միջոցառումներ:

2017-2021թթ. ընթացքում կշարունակվեն համայնքի և ՀՀ Լոռու մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, ՔՀՄՀ-ի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը և միջոցառումները: Մասնավորապես, նախատեսվում է շարունակել համայնքի սերտ համագործակցությունը <<Հայաստանի սոց. ներդրումների>> և «Վորլդ Վիժն - Հայաստան» կազմակերպության Ալավերդու ՏԶԾ-ի, Ալավերդու «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի, «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի, «Թումանյան Աշխարհ» զբոսաշրջային միջհամայնքային զրասենյակի հետ՝ նախադպրոցական և դպրոցական կրթության, առողջապահության, երեխաների սոցիալական պաշտպանության, մշակույթի և սպորտի, տեղական ժողովրդավարության և մասնակցության, զբոսաշրջության, մարդու իրավունքների, համայնքային զարգացման և այլ ոլորտներում:

## 4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Վերլուծելով համայնքի 2015-16թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները , տեսնում ենք՝ 2015թ-ի բյուջեի փաստացի կատարողականի ընդհանուր մուտքերը՝ 49158.7 հազ.դրամ , 2016թ-ին փաստացի կատարողականը կազմել է 18416.1 հազ.դրամ, դա հիմնականում պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ 2016թ-ին պետական բյուջեից տրամադրվող նպատակային վարչական և կապիտալ սուբվենցիաներ չեն տրվել:

Համայնքը գալիք 5 տարիների բյուջեների համար նախատեսվել են գումարներ ֆինանսական ակտիվների /հողի/ իրացման գծով, ֆոնդային բյուջեում նախատեսելու կապիտալ ծախսեր և ծրագրեր իրականացնելու համար:

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի աշխատողների /10միավոր/ 2017 թվականի միայն աշխատավարձի տարեկան ֆոնդը նախատեսվել է 13725.0 հազ.դրամ:

Համայնքի ՀՈԱԿ-ի աշխատակիցների 2017 թվականի աշխատավարձի տարեկան ֆոնդը նախատեսվել է 3360.0 հազ.դրամ, իսկ դրանց պահպանման ծախսերը 3500.0 հազ.դրամ է:

Համայնքի 2015-2016թ.թ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը /հազար դրամ/

| Հ/հ | Մուտքերի անվանումը | 2015թ. Փաստ. | 2016թ. Նախատ. | 2016թ. Փաստ. | 2017թ. Նախատ. | 2018թ. կանխ. | 2019թ. կանխ. | 2020թ. կանխ. | 2021թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)* | 49158.7 | 23562.9 | 16032.1 | 26125.1 | 42390.0 | 42720.0 | 44310.0 | 46510.0 |
| I. | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)* | 49158.7 | 23562.9 | 16032.1 | 26125.1 | 42390.0 | 42720.0 | 44310.0 | 46510.0 |
| 1. | ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | 3373.1 | 3135.0 | 2414.8 | 3205.9 | 3290.0 | 3320.0 | 3340.0 | 3410.0 |
| 1.1 | Գույքային հարկեր անշարժ գույքից | 1364.1 | 1388.8 | 1188.1 | 1500.4 | 1520.0 | 1540.0 | 1550.0 | 1560.0 |
| | Գույքահարկ շենքերի և շինությունների համար | 418.6 | 360.7 | 580.4 | 531.3 | 540.0 | 550.0 | 555.0 | 560.0 |
| | Հողի հարկ | 945.5 | 1028.1 | 607.7 | 969.1 | 980.0 | 990.0 | 995.0 | 1000.0 |
| 1.2 | Գույքային հարկեր այլ գույքից | 1476.5 | 1346.5 | 886.2 | 1305.5 | 1350.0 | 1360.0 | 1370.0 | 1400.0 |
| | Գույքահարկ Փոխադրամիջոցների համար | 1476.5 | 1346.5 | 886.2 | 1305.5 | 1350.0 | 1360.0 | 1370.0 | 1400.0 |
| 1.3 | Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարնե | 532.5 | 400.0 | 340.5 | 400.0 | 420.0 | 420.0 | 420.0 | 450.0 |
| | Տեղական տուրքեր | 532.5 | 400.0 | 340.5 | 400.0 | 420.0 | 420.0 | 420.0 | 450.0 |
| 1.4 | Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ | | | | | | | | |
| | Պետական տուրքեր | | | | | | | | |
| 1.5 | Այլ հարկային եկամուտներ | | | | | | | | |
| | Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ | | | | | | | | |
| | Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ | | | | | | | | |
| 2. | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 25762.1 | 14096.6 | 11729.0 | 17510.9 | 33500.0 | 33600.0 | 33700.0 | 34000.0 |
| 2.1 | Ընթացիկ արտաքին | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | | |
